



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2017 թվականի
Թիվ 60-Ա, քաղաք Երևան

«ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵՎ «ԱՐԵԳ ԳՐՈՒՊ ԴԻԷՄՍԻՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի մարտի 24-ի դռնբաց նիստում քննարկեց «ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» փակ բաժնետիրական (այսուհետ՝ «ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» ընկերություն) և «Արեգ Գրուպ ԴիԷմՍիՍի» սահմանափակ պատասխանատվությամբ (այսուհետ՝ «Արեգ Գրուպ ԴիԷմՍիՍի» ընկերություն) ընկերությունների (այսուհետ նաև՝ Ընկերություններ) համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Ընկերությունները 2017 թվականի մարտի 13-ին դիմում են (այսուհետ՝ Դիմում) ներկայացրել Հանձնաժողով հայտնելով, որ «Արեգ Գրուպ ԴիԷմՍիՍի» ընկերությունը ցանկանում է ձեռք բերել «ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» ընկերության 50 տոկոս բաժնետոմսերը: Համակենտրոնացման նպատակն է ներդրումների ներգրավումը:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են Ընկերությունների կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայացված տեղեկությունների համաձայն, «ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» ընկերությունը հիմնականում իրականացնում է մետաղների, խտանյութերի առևտուր, արտահանում է մոլիբդեն, ֆերոմոլիբդեն:

«ՋԻ ԱՆ Ի ՓԻ ՍԻ Օ» ընկերության 2016 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է դրամ, հասույթը՝ դրամ:

«Արեգ Գրուպ ԴիԷմՍիՍի» ընկերությունը Արաբական Միացյալ Էմիրություններում 2017 թվականի հունվարի 17-ին գրանցված ընկերություն է, իրականացնում է կառավարման ծառայություններ:

«Արեգ Գրուպ ԴիԷմՍիՍի» ընկերության 2017 թվականի փետրվար ամսվա դրությամբ կանոնադրական կապիտալը և ակտիվները կազմել են

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Փաստորեն համակենտրոնացման մասնակցի ակտիվների և հասույթի արժեքները գերազանցում են Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների և հասույթի արժեքները, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է համակենտրոնացում և այն ենթակա է հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Արեգ Գրուպ Դիվիզիոն» ընկերությունը Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկայի մասնակից չէ, և համակենտրոնացման նպատակը ներդրումների ներգրավումն է, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությանը չի խոչընդոտում և ենթակա է թույլատրման:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածները և 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «թ» կետերը՝ Հանձնաժողովը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Թույլատրել «Ջի Առ Ի Փի Սի Օ» փակ բաժնետիրական և «Արեգ Գրուպ Դիվիզիոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համակենտրոնացումը՝ «Արեգ Գրուպ Դիվիզիոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ջի Առ Ի Փի Սի Օ» փակ բաժնետիրական ընկերության 50 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Ջի Առ Ի Փի Սի Օ» փակ բաժնետիրական և «Արեգ Գրուպ Դիվիզիոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ